

վերոգրեալ արքն երեւելիք, կամեցան արդար իրաւամբք եւ նախ դատաստանաւ դատել զնա, որոց ազաղակ ամբաստանութեանն այս է, զի ամենայն օրէնք եւ սահմանք բարեկարգութեան հոգեւորն եւ մարմնաւոր քաղաքավարութեան բնակչաց սուրբ աթոռոյն ներքոյ եւ արտաքոյ, աստուածային եւ մարդկային, որ հաստատեալ էր յերանելի արանցն Աստուծոյ՝ ի լուսաւոր հոգի Մովսէս հոգեւորտիրէն եւ ի Փիլիպպոս կաթողիկոսէն, այն ամենայն եղծեալ ազականացաւ յաւուրս սորին (Յակոբ Դ.ի) : Երկրորդ՝ զի յայտնապէս զազանդ քաղկեդոնիկ երկարնակացն բնկալեալ եւ զնոյն երկարնակ զաւանութիւնն զրով եւ կընքով իւրով առաքեաց առ պապն Հռոմայ :

Հոս կանդ տոնենք ընթերցողին յիշեցնելու որ Յակոբ Դ.ի «երկարնակ զաւանութիւնն զրով եւ կընքով իւրով առաքեաց առ պապն Հռոմայ» ուրիշ բան չէ եթէ ոչ այդ բաներէն բոլորովին զուրկ իր 28 Անպանմբեր 1661 թուակիր նամակը : Թէ ուրիշ ի՞նչ ապացոյց որ Յակոբ Դ. «յայտնապէս զազանդ քաղկեդոնիկ երկարնակացն բնկալեալ» է չէ ըսուած : Անտարակոյս եթէ կար որեւէ դոյզն ապացոյց պիտի յիշէր Ռնուիրիոս, որ չի դանդաղիր չեղած բանն իսկ ստելով եւ խեղաթիւրելով ներկայացնել : Ծարունակե՛նք :

«Երրորդ՝ զի ոչ ըստ կանոնաց սրբոց եւ սահմանի ազգաց կամի վիճակաւ եւ հաւանութեամբ ամենայն եկեղեցւոյն ընտրել զյաջորդ սուրբ աթոռոյն, այլ ինքնահաւան անձնահաճութեամբ զծերագոյնս յետս բնկրկեալ եւ զեսն իմն ունկապեալ, զիւրային մակարարոյն յառաջեցուցանէ :»

«Չորրորդ՝ զի զչքնազ եւ զպայծառ, ազատ եւ ամենափայլելութեամբ յրդփացեալ զսուրբ աթոռն էջմիածնի ի ներքոյ ՌԾ (1500) թուաման պարտուց էարկ, եւ զօր ըստ օրէ եկեալ հասան եւ զիրաւունն վայրածախ շոպլութեամբ կորուսանէ :»

**

ՅԱԿՈԲ Դ. ԶՈՒՂԱՅՅՅՈՒ ՄԻ ՇԻՋԱԲԵՐԱԿԱՆԻ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԸ

«Ստորեւ զետեղուած հատուածներն ընդօրինակուած ենք էջմ. Մատենադարանի թիւ 2693 զրչազրի կազմին կպցրած պահպանակներից : Ամբողջ գրութիւնը ամփոփուած է եղել երկար փաթեթի մի երեսի վրայ, որ յետոյ, գործադրուելով որպէս պահպանակ, պէտք է կտոր կտոր արուէր : Մկրատն անհետացրել է այսպիսով գրութեան սկզբի եւ միջին տողերից մի քանիսը, իսկ վերջից՝ ստորագրութիւնը : Տեղ տեղ կտրտուած են նաեւ հատուածները ծայրերը, կամ թէ տողերն ընդհատուած են շնորհիւ կազմի վրայ ամբացած մեխերի, որոնցով պահուած են զրչազրի փականները : Սակայն հարեւանցի իսկ ծանօթանալով ընթեանելի տողերի հետ, զժուար չէ համոզուել, որ գործ ունենք Յակոբ Դ. Զուղայեցու 1667 թ. Մարտի 22-ին Կ. Պօլսում գրած մի շրջաբերական կոնդակի հետ :»

(Ա. Յովհաննիսեան Յակոբ Դ. Զուղայեցի Կաթողիկոսը եւ Տաճկահայ Նուիրակութեան Ոնդիրը : ԱՐԱՐԱՏ էջմիածնայ պաշտօնաթերթ 1915, Փետր. Մարտ թիւ էջ 195-205 : Հմտ. էջ 201) :

«... զալ առ ինքն ազաղակ, յայնժամ հրամայեաց թ(ա)զ(աւո)րն փութանակի տանել զմեզ առ զայմաղամ փաշան, առ ի հասու լինել զմեր ո(ր)պ(իս)ութե(ան) հասաս... ինձ թալհիս անէ հրամայեաց ստէպ ստէպ. Յայնժամ առեալ տարան զմեզ առ զայմաղամ փաշան եւ մինչ զնայեաք ի ճանապարհին, մի ի ծառայից ե(կն) ա(ւ) մեզ փութացուցանելով ի հրամանէ թ(ա)զ(աւո)րին, եւ յորժամ հասաք մեք առ զայմաղամն եւ մինչդեռ խօսէաք ընդ նմա, եկն նախ երկ(րո)րդ երրորդ չորրորդումն անգամ ի վ(է)ր(ա) միմիանց մարդ առաքեաց առ ի ստէպ փութացանել եւ երազ երազ հասանել ի վ(է)ր(ա) իրին եւ թալհիս